ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 Նոյեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

157
(3007)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻԿՆԱՊԱՀԻՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԿԱՆՉԵԼ «ԽՆՁՈՐ ՆԵՏԵԼՈՒ» ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանի թիկնապահ Գրիգոր Մանուկյանին դատարանը ծանուցում է ուղարկել, որպեսզի վերջինս ներկայանա՝ցուցմունք տալու: Իսկ ինչ քրեական գործով են նրան դատարան կանչում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի վրա խնձոր նետելու քրեական գործը Երեւան քաղաքի դատարանում է, եւ այն քննելու է դատավոր Արման Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ այս տարվա օգոստոսի 23-ի երեկոյան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց 2/2 հասցե էր գնացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իր հորաքրոջն ու դստերը տեսակցության: Հանդիպումը ավարտելուց հետո, երբ շենքից դուրս էր եկել, դիմացի շենքի 9-րդ հարկից քաղաքացին խնձոր էր նետել Փաշինյանի ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանն ու վերջինիս պահակախումբը ենթադրել էին, որ իրենց ուղղությամբ նռնակ է նետվել, եւ անմիջապես պառկել էին գետնին: Իրավապահները օրեր շարունակ Ռուբինյանց 2/2 շենքում խուզարկություններ էին անում, փնտրում այդ տեսակի խնձոր մարդկանց բնակարաններում:

Ի վերջո, խնձորը նետելու կասկածանքով, ձերբակալվեց 71-ամյա արցախցի Ալբերտ Առստամյանը: Դեպքից հետո փաստաբան Ռոման Երիցյանը հայտարարեց, որ Ալբերտ Առստամյանի ընտանիքի անդամներին (2 աղջկան եւ թոռնուհուն) նույն օրը, իրենց կամքին հակառակ, տեղափոխել էին ոստիկանության Զեյթունի բաժին եւ պահել մինչեւ առավոտյան 07:00-ն: Ալբերտ պապիկի բնակության վայրը մանկահասակ երեխաների ներկայությամբ ենթարկվել էր խուզարկության՝ խնձոր գտնելու նպատակով:

Արդյունքում, Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու հիմքով, Ալբերտ Առստամյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու համար. նրա նկատմամբ ընտրվել է «բացակայելու արգելք» խափանման միջոցը: ՀՀ քննչական կոմիտեն որոշում է կայացրել գործով նախաքննության ավարտ հայտարարել ու գործը ուղարկել է դատարան»: Եվ ահա, գործով վկաներից մեկը Փաշինյանի թիկնապահ Գրիգոր Մանուկյանն է, որին էլ կանչել են դատարան:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ արտախորհրդարանական ուժերը «պլան Բ» են ծրագրել: Եվրոպամետ ուժերը վստահ են, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որքան էլ իբրեւ եվրոպամետ է դիրքավորվել, ԱԺ-ում մերժելու է ԵՄ անդամակցության հարցով հանրաքվեի իրենց նախագիծը. ուստի արտախորհրդարանականներն արդեն իսկ պատրաստվում են «պլան Բ»-ի եւ մտադիր են օրենքի պահանջով 60 օրում 300 հազար ստորագրություն հավաքել, որի դեպքում արդեն, երկրորդ փուլով, նախագիծը ինքնաբերաբար, օրենքի ուժով կդրվի հանրաքվեի: «Իշխանությունները չէին թաքցնում իրենց դժգոհությունը: Նրանք մեր այս նախաձեռնությունը համարում էին արկածախնդրություն, «ազգային ազատագրական պայքար», չգիտես ինչու՝ հեգնանքով: Այնպես որ, ես չգիտեմ՝ որքանով է անհամաձայնության այդ տեսակետը պաշտոնական, բայց այն կիսում են ՔՊ անդամ պատգամավորները: Մենք 60.000 քաղաքացիների քվեները ջուրը չենք գցի: Ի սկզբանե նշել էինք, որ մինչեւ վերջ գնալու ենք մեր նպատակին հասնելու համար, եւ եթե մերժվի, 300 հազար ստորագրություն էլ կհավաքենք», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Խզմալյանը: Նշենք, որ ԵՄ անդամակցության հանրաքվեի պահանջով հավաքված 60 հազար ստորագրություններն արդեն ԿԸՀ-ում են: Արտախորհրդարանական ուժերը մտադիր են արդեն նոյեմբերի վերջին նախաձեռնությունը ԱԺ տանել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը մեկը մյուսի հետեւից երկարեցնում է իշխանության յուրացման գործով կալանավորվածների կալանքի ժամկետը, բայց աշխատանքի արդյունավետությունը չի երեւում: Երեկ դատարանը 2 ամսով երկարեցրել է արցախցի Արմեն Մնացականյանի կալանքի ժամկետը: Փաստաբան Ռոման Երիցյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ դատարանը հայցը մասնակի է բավարարել ու թույլ է տվել, որ միայն մերձավոր հարազատները տեսակցեն Արմեն Մնացականյանին: Մյուսների համար տեսակցությունները փակ են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝ Սերոբ Գասպարյանի կալանքի ժամկետի հարցն է քննվելու դատարանում: Նախաքննական մարմինը դիմել է դատարան՝ դարձյալ կալանքի ժամկետը երկարեցնելու համար: Մնում է՝ դատարանը որոշում կայացնի. կամ նրա կալանքի ժամկետը երկարեցնում է, կամ ազատ արձակում ԱԱԾ մեկուսարանից: Հիշեցնենք, որ նրանք մեղադրվում են մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու համար: Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

«Ռենջերներ»-ից էկոպարեկներ եւ վայրի բնության պահապաններ դարձածները միլիոնավոր նոր ծախսեր են առաջացրել պետական բյուջեի համար: «Ժողովուրդ» օրաթերթը 2025 թվականի պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի ելույթից տեղեկացավ, որ միայն էկոպարեկային ծառայության հիմնադրումը շրջակա միջավայրի նախարարության բյուջեն 38%-ով ավելացրել է: Էկոպարեկային ծառայության ներդրումը նախարարության համար արժեցել է 5.7 միլիարդ դրամ՝ գրեթե 147 հազար դոլար, սակայն էկոպարեկային ծառայությունը, որը պետք է առնվազն Սյունիքի մարզում գործեր ամբողջ ծավալով, այս տարեվերջին դեռ չի գործի. ժամկետները հետաձգվել են մինչեւ գալիք տարվա փետրվարի 26-ը: Այս մասին «Ազատության» հետ զրույցում ասել էր ծառայության ղեկավար Վլադիմիր Կիրակոսյանը: Ամբողջությամբ չներդրված ծառայության ծառայողական համազգեստի համար պետական բյուջեից հատկացվել է 35 մլն 837 հազար դրամ՝ 90 հազար դոլար: Հիշեցնենք, որ «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքն ընդունվել է մեկ տարի առաջ, ուժի մեջ մտել այս տարի, իսկ օրենքից բխող իրավական ակտերը պետք է ընդունվեին վեցամսյա ժամկետում: Սակայն մինչ օրս ծառայությունը չունի համապատասխան աշխատողներ ու տեխնիկա: Էկոպարեկների մրցույթն էլ միայն օրերս՝ նոյեմբերի սկզբին է հայտարարվել: Նկատենք, որ թեեւ թիմ ու ռեսուրս չունի նորաստեղծ մարմինը, բայց արդեն համազգեստներ են գնվել, պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ էլեկտրաշոկ, լապտեր եւ այլն: Ով պետք է կիրառի՝ դեռ պարզ չէ: Բացի այս գնումներից՝ հոկտեմբերի սկզբին գործադիրը 509.5 մլն դրամ՝ 1 մլն 313 հազար դոլար հատկացրեց էկոպարեկների համար 22 նոր ավտոմեքենաներ գնելու համար: Ստացվում է, որ պարեկային ծառայությունից զատ, ՀՀ պետական բյուջեն մսխվում է նաեւ էկոպարեկային ծառայության վրա, եւ այդ դեպքում վատ կազմակերպչական աշխատանքների ու նախանշված ժամկետները խախտելու թիվ մեկ պատասխանատուն Հակոբ Սիմիդյանն է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ

ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանի հետ զրուցել ենք 44-օրյա պատերազմի տարելիցի օրը ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի հրապարակած լուսանկարների եւ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցերի վերաբերյալ:

Պարոն Հակոբյան, այս օրերին կուսակցության ներսում շատ է քննարկվում Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցը եւ, ըստ շրջանառվող տեղեկությունների, նրանից դժգոհ անձանց թվում նաեւ Ձեր անունը կա, ասում են՝ Դուք եք հենց նախաձեռնողը, քանզի Անդրանիկ Քոչարյանի հետ տարաձայնություններ ունեք: Դուք ինչպե՞ս կմեկնաբանեք, ի՞նչ միջադեպ է եղել, եւ արդյոք նախաձեռնո՞ղն եք պաշտոնանկության այս գործի:

-Այդ հարցի վերաբերյալ ճեպազրույց եմ տվել, մանրամասն խոսել այդ մասին, այնպես որ նշված բոլոր հարցերի պատասխանները ճեպազրույցում են:

-Նշում են՝ Դուք այլ թեկնածուի եք առաջարկել Անդրանիկ Քոչարյանի պաշտոնում:

-Ես որեւէ մեկի թեկնածությունը չեմ առաջադրել, որեւէ նախաձեռնության հեղինակ չեմ: Ինչ վերաբերում է ձեր նշած կարծիքներին. մեր կուսակցության ներսում բազմաթիվ քննարկումներ են լինում, եւ այս քննարկումը կարող ենք համարել ՔՊ ներկուսակցական հարցերից մեկը:

-Պարոն Հակոբյան, շատերը դժգհում են, ասում՝ Անդրանիկ Քոչարյանը պարբերաբար վիրավորական արտահայտություններ է հնչեցնում թիմակիցների հասցեին, բացասական արտահայտություններ անում: Դուք նրա հետ ինճպիսի՞ հարաբերություններ ունեք, երբեւէ բացասական միջադեպ եղե՞լ է:

-Ես նման դժգոհություն չունեմ, չգիտեմ՝ ովքեր են բողոքում: Ինձ հետ կապված միջադեպ չի եղել:

-Պաշտոնանկության գործընթացին կո՞ղմ եք, թե՞ դեմ:

-Այդ գործընթացի մասին մամուլից եմ տեղեկացել:

-Պարոն Հակոբյան, 44-օրյա պատերազմի տարելիցի օրը տիկին Աննա Հակոբյանը հանգստից լուսանկարներ հրապարակեց, որը հանրությանը բարկացրեց եւ քննադատությունների տեղիք տվեց: Սա առաջին դեպքը չէ, որ նման հիշատակի օրերին վարչապետի ընտանիքի անդամները նկարներ են հրապարակում հանգստից: Դուք ինչպե՞ս եք վերաբերում այդ փաստին:

-Ես չեմ տեսել լուսանկարները, հրապարակմանը ծանոթ չեմ, այնպես որ զերծ կմնամ մեկնաբանություն տալուց: Եթե քննադատելիս շեշտադրվում է այն, որ հրապարակումը արվել է տարելիցի օրը, միեւնույնն է, չեմ ցանկանում այդ հարցով մեկնաբանություն անել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՆՉ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ

42 ՄԼՆ ԴՐԱՄ՝ Yerevan fashion week 2024-Ի ՀԱՄԱՐ

2024 թվականի նոյեմբերի 7-10-ը Հայաստանում անցկացվեց «Երեւանի Նորաձության շաբաթ 2024»-ը, որը կազմակերպել էր «Հայաստանի նորաձեւության եւ հագուստի պալատ» հասարակական կազմակերպությունը:

Միջոցառման գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն էր, ինչպես նաեւ միջազգային զարգացման աջակցության շրջանակում Միացյալ Թագավորության կառավարությունը, Գերմանիայի կառավարության կողմից պատվիրակված եւ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող ՄՀՋ ՄԿՈՒ ծրագիրը եւ Բրիտանական խորհուրդը:

Իսկ որքան գումար է հատկացվել Երեւան քաղաքի բյուջեից Yerevan fashion week 2024-ը կազմակերպելու համար:

Համաձայն Երեւանի քաղաքապետարանի եւ «Հայաստանի նորաձեւության եւ հագուստի պալատ» ՀԿ-ի միջեւ կնքված եւ Երեւանի քաղաքապետարանի կողմից հարցման միջոցով ArmLur.am-ին տրամադրած պայմանագրի՝ անհրաժեշտ է եղել նոյեմբերի 8-10-ը կազմակերպել 15-20 բրենդների անհատական ցուցադրություն՝ 3 օր տեւողությամբ, յուրաքանչյուրին նախատեսված 500 հյուր ունենալու հնարավորությամբ:

Արտերկրից միջոցառմանը մասնակցել է 4 դիզայներներ: Անհրաժեշտ է եղել



կազմակերպել դիզայներների մրցույթ միջազգային Fashion Scout հարթակի միջոցով եւ պատրաստել մրցանակ հաղթողի համար:

«Հայաստանի նորաձեւության եւ հագուստի պալատ» ՀԿ-ն ստանձնել է պարտավորություն կազմակերպել հյուրասիրություններ, երեկույթներ, պանելային քննարկումներ, ցուցադրություններ եւ ցուցահանդեսներ հայկական ապրանքանիշների ներկայացմամբ:

Ծրագրի լուսաբանումն ապահովել են 10-ից ավելի միջազգային եւ տեղական լրատվամիջոցներ, 5 ինֆլյուենսերներ, որոնց հետեւորդների թիվը 20 հազարից ավելի պետք է լիներ:

Այսպիսով՝ «Հայաստանի նորաձեւության եւ հագուստի պալատ» ՀԿ-ն Երեւանի քաղաքապետարանի կողմից ստացել է 42 մլն դրամ Yerevan fashion week 2024-ը:

Ինչի համար է հստակ ծախսվել 42 մլն դրամը. Մարքեթինգային ծախսերը՝ դիզայնը եւ բրենդինգը, PR արշավը, կոնտենտի մշակումը, մեդիա ծառայությունները, տպագրությունը, ֆոտո եւ վիդեո նկարահանումը, միջազգային մամուլի, ինֆլուենսերների, փորձագետների համար ճանապարհածախսը, տրանսպորտը եւ կացության ծախսերը, արժեցել են 14 մլն 400 հազար դրամ:

Տեխնիկական եւ մասնագիտական ծառայությունների ծախսերը՝ տեխնիկայի վարձակալությունը, տրամադրումը եւ սպասարկումը, Վարսահարդարում եւ դիմահարդարումը, մոդելային ծառայությունները, միջազգային կազմակերպչական ծառայությունները, կազմել են 27 մլն 600 հազար դրամ:

Հարկ է նշել, որ Yerevan fashion week 2024-ի ընթացքում 3 օրվա համար ընտրված մոդելներից 50-ը վճարվել է 150 հազար դրամ, իսկ վարսահարդարների եւ դիմահարդարների ծառայությունների արժեքը կազմել է օրական 1 մլն դրամ՝ 3 օրավա համար՝3 մլն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆՆ «ԱՓՍՈՍՈՒՄ Է» ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ COP-29-ԻՆ ՀԱՅՏ ՉԻ ՈՒՂԱՐԿԵԼ

Ադրբեջանի նախագահի օգնականն ափսոսանք է հայտնել, որ Երեւանը պատվիրակություն չի ուղարկել՝ մասնակցելու COP-29-ին:

«Միեւնույն ժամանակ, Երեւանը շարունակում է խոսել տարածաշրջանային գործակցության եւ գործընկերության մասին»,- հավելել է Հիքմեթ Հաջիեւը:

Նա նաեւ մեղադրել է Հայաստանին՝ կլիմայական համաժողովին ընդառաջ, իբր, հակաադրբեջանական քարոզչություն վարելու համար: Նույն մեղադրանքները Հաջիեւը հնչեցրել է նաեւ Արեւմուտքի հասցեին:

Երեկ փոխարտգործնախարար Վահան Կոստանյանը լրագրողների հետ զրույցում նշել էր, որ COP-29-ին Հայաստանի մասնակցության հարցը կախված է բանակցությունների ընդհանուր դինամիկայից, եւ հայկական կողմը դեռ որոշում չունի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը սոցցանցի իր էջում գրում է. «Իրավապահ մարմինների կողմից այսօր (չխմբ.) գործողություններ են իրականացվել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առեւտրի եւ սպասարկումների բաժնում:

Ըստ այդմ կան ձերբակալվածներ:

Հետեւելով տեղի ունեցող իրադարձությունների ընթացքին՝ հավաստիացնում եմ, որ դեմ եմ աշխատանքային լիազորությունների չարաշահմանը եւ կոռուպցիայի ցանկացած դրսեւորմանը:

Հավաստիացնում եմ, որ հետեւողական եմ լինելու նման արատավոր երեւույթները բացահայտելու եւ այն արմատախիլ անելու համար:

Թեմայի հետ կապված այլ տեղեկություններ ճշտելու համար խնդրում եմ դիմել իրավապահ մարմինների մեր գործընկերներին»:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը վերահաստատել է ԵՄ պատրաստակամությունը՝ աջակցելու բոլոր ջանքերին հանուն կայուն, խաղաղ եւ բարգավաճ Կովկասի:

Այս մասին Շառլ Միշելը գրառում է կատարել X-միկրոբլոգում՝ հայտնելով, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ քննարկվել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը

Նա նշել է, որ անցյալ շաբաթ Բուդապեշտում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ մտքերի փոխանակումից հետո նույնպես քննարկվել են հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում առկա իրավիճակը:

«ԵՄ-ն պատրաստ է աջակցել կայուն, խաղաղ եւ բարգավաճ Կովկասի բոլոր ջանքերին»,- գրել է Միշելը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՍՐԱՅԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԿՎԵԼ Է 90 ՀՐԹԻՌ

Լիբանանից Իսրայելի տարածք երեկ՝ կեսօրին, արձակվել է շուրջ ինսսուն հրթիռ:

Այդ մասին են վկայում Իսրայելի բանակի մամուլի ծառայության հաղորդագրությունները:

«Հրթիռների մեծ մասը որսացել են»,- ասվում է հաղորդագրության մեջ եւ ընդգծվում՝ մի քանի հատվածներում արկեր են ընկել:

Ավելի վաղ Իսրայելի բանակի մամուլի ծառայությունը կես ժամվա ընթացքում հինգ անգամ հաղորդել էր Իսրայելի հյուսիսի տարբեր շրջաններում ազդանշանների մասին: Օդային ռմբակոծության մասին ահազանգ էր հնչել Հայֆա, Ակրե եւ Նահարիա քաղաքներում:

ԿՈՒԲԱՅՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՆ ՎՆԱՍՎԵԼ

Կուբայի արեւելքում նոյեմբերի 10-ին տեղի ունեցած երկրաշարժից հետո զգալի վնաս է հասցվել մի շարք ենթակառուցվածքների: Այդ մասին հաղորդում է CiberCuba լրատվական հարթակը:

6 եւ 6,7 մագնիտուդով ցնցումներն զգացել են Լաս Տունաս, Սանտյագո, Գուանտանամո եւ, հատկապես, Գրանմա նահանգների բնակիչները: Վնասվել են տներ եւ ճանապարհներ:

Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվել է ծովում՝ Կուբայի ափերի մոտ:

ՇՈԼՑԸ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻՑ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ ԿԽՆԴՐԻ

Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը դեկտեմբերի 16-ին Բունդեսթագից վստահության քվե կխնդրի. այս մասին գրում է գերմանական Bild թերթը՝ վկայակոչելով սեփական աղբյուրները:

Ենթադրվում է, որ կանցլերը վստահության քվե չի ստանա, իսկ հետո՝2025 թվականի փետրվարի 23-ին, Գերմանիայում կարող են տեղի ունենալ արտահերթ ընտրություններ, ինչպես որ նախկինում դաշնային նախագահին առաջարկել էին Քրիստոնեա-դեմոկրատական միություն/Քրիստոնեա-սոցիալական միության եւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդները:

Կանաչների եւ Ազատ դեմոկրատական կուսակցությունները հաստատել են իրենց համաձայնությունն առաջարկվող ամսաթվի հետ:

Գերմանիայում իշխող կոալիցիան փլուզվել է նոյեմբերի 7-ին: Դա տեղի է ունեցել, քանի որ կողմերին չի հաջողվել համաձայնության գալ դաշնային բյուջեի շուրջ: Գերմանիան այժմ կառավարվում է սոցիալ-դեմոկրատների եւ կանաչների փոքրամասնության կառավարության կողմից:

Global Witness-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

COP29-Ը ԳՈՐԾԻՔ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱՐ

COP29-ի նախապատրաստական աշխատանքները համակարգող կազմակերպությունը գործում է Բաքվի կենտրոնում գտնվող 13 հարկանի բիզնես կենտրոնում: Շենքի բացման արարողությունը տեղի է ունեցել հունվարին՝ անձամբ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ, ով հայտնի է, որպես բռնապետ: Այն գտնվում է 1840-ականներին համաշխարհային նավթարդյունաբերության ծննդավայր դարձած «Սեւ քաղաքում», որն այժմ արվեստի գործերով եւ գրասենյակային տեղերով լի տարածք է:

Պատահական չէ, որ Ալիեւի համար ռազմավարական նշանակություն ունեցող COP29-ի նախապատրաստական աշխատանքները համակարգող կազմակերպությունը գտնվում է հենց նավթարդյունաբերության ծննդավայր «Սեւ քաղաքում»:

Ինչո՞ւ պիտի Ադրբեջանի նման նավթային պետությունը, որի պետական եկամուտների երկու երրորդը ստացվում է նավթից եւ գազից, ցանկանա ընդունել կլիմայի շուրջ բանակցությունները:

COP29-ի նախապատրաստական աշխատանքները համակարգող կազմակերպության ղեկավար Էլնուր Սոլթանովը, ինչպես նշում է Global Witness-ը, պատասխանատու լինելով COP29-ի կազմակերպման համար, կարծես փորձում էր նավթային շուկայում նոր համաձայնություններ ձեռք բերել:

Նա նշել է, որ եթե կան առաջարկներ, որոնք նավթի եւ գազի կորպորացիաները կարող են սեղանին դնել՝ լուծելու համար կլիմայական ճգնաժամը, ապա դրանք ողջունելի կլինեն:

Այսպիսով՝ ողջունելի է նաեւ նավթային կազմակերպությունների մասնակցությունն ու հովանավորումը COP29-ի անցկացմանը, սակայն դրանք որոշիչ դեր ունենալ չեն կարող եւ չեն կարող իրենց «մասնավոր շահերը փնտրել» կամ «սեփական շահերը հետապնդել»:

Սոլթանովը նշել է, որ այս ընթացքում SOCAR-ը չի պատրաստվում բաժնետոմսեր վաճառել, սակայն դա «չի նշանակում, որ ներդրումների, SOCAR-ի հետ համատեղ ձեռնարկություններ հիմնելու հնարավորություններ չկան»: EC Capital-ը կարող է հատկապես հետաքրքրված լինել «կանաչ անցումային նախագծերով»:

Ուսումնասիրելով Global Witness-ի վերոնշյալ հոդվածը՝ հասկանալի է դառնում, որ Ադրբեջանը՝ նավթի եւ գազի շուկայում աճող արդյունաբերությամբ երկիրը, որեւէ կապ չունի կլիմայի փոփոխությունների դեմ պայքարի հետ: Ադրբեջանը հենց այն պետությունն է, որը, ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով ռուսական գազից արեւմուտքի հրաժարվելուն պես, սկսեց վառելիք մատակարարել արեւմտյան պետություններին: Պետք է նշել նաեւ, որ Ադրբեջանը գազի գնման պայմանագիր կնքեց նաեւ Ռուսատանի Դաշնության հետ՝ բավարարելու ներքին պաշարները՝ մինչ կկարողանա ավելացնել արդյունաբերության ծավալները:

Հիմա հենց COP29-ն է, որ Ադրբեջանին, փաստորեն, հնարավորություն է տալիս նոր համաձայնություններ ձեռք բերել վառելիքի արդյունաբերության շուկայում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը երկրորդ անգամ ռուսական կողմին է ուղարկել իր առաջարկությունները՝ երկրում ռուսական ալիքների հեռարձակումը կարգավորող միջկառավարական համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը՝ անդրադառնալով հարցին, թե ինչ քայլեր են արվում ռուսական հեռուստաալիքների համաձայնագրի մասով:

Փաստաթուղթը ստորագրվել էր 2020 թվականին: Համաձայնագրի նպատակն է երկու երկրի եթերներում բացառել այն հաղորդումները, որոնք կներկայացնեն միջամտություն ներքին գործերին, վիրավորանքներ մյուս երկրի եւ ժողովրդի հասցեին:

«Մենք 4 ամիս առաջ միջպետական համաձայնագրում փոփոխություններ անելու առաջարկներն ուղարկել ենք մեր ռուս գործընկերներին: Արձագանք չենք ստացել, ու 1 ամիս առաջ նույնպես նույն առաջարկներն ուղարկել ենք: Այժմ ակնկալում ենք, որ արձագանք կստանանք՝ հասկանալու մեր ռուս գործընկերների պատկերացումները, արդյոք հնարավոր են համարում այդ փոփոխությունները, թե ոչ», - նշեց Հայրապետյանը:

ՔՊ-Ն ՉԸՆԴՈՒՆԵՑ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը երեկ մերժեց ընդունել Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիներին ազատ արձակելու վերաբերյալ ընդդիմության հայտարարության նախագիծը:

Նախագծով Հայաստանի խորհրդարանի անունից կոչ էր արվում միջազգային հանրությանը ճնշում գործադրել Բաքվի վրա՝ Ադրբեջանում պահվող բոլոր հայ ռազմագերիների ազատ արձակման համար:

Ընդդիմության հայտարարության նախագիծը չընդունվեց 30 կողմ եւ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Հայտարարության նախագիծը նաեւ հորդորում էր Հայաստանի կառավարությանը ակտիվորեն համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ մյուս բոլոր հայ գերիների ազատ արձակմանը հասնելու համար:

ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը պնդեց՝ Հայաստանի կառավարությունն ամեն օր է զբաղվում հայ գերիներին վերադարձնելու հարցով, ու քանի որ ընդդիմության ներկայացրած հայտարարության նախագիծը չի լուծում այդ խնդիրը, եւ իրենք չեն կարող սխալ գործիքներով խնդրին ճիշտ լուծում տալ, հետեւաբար իշխող խմբակցությունը չի մասնակցի քվեարկությանը:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում հիմա 23 հայ է գերության մեջ, նրանցից 8-ը Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարությունն է:

ՍԱՏՄ-Ն ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ ՈՒՆԻ

Վարչապետի աշխատակազմի ՏՄ համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արմեն Դանիելյանը նշանակվել է ՍԱՏՄ ղեկավար:

Այդ մասին տեղեկանում ենք Փաշինյանի որոշումից:

«Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Արմեն Ռաֆիկի Դանիելյանին 2024 թվականի նոյեմբերի 11-ից ազատել Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալի (պաշտոնի ծածկագիր՝ 06-Գ27-Ղ1-2) պաշտոնից»:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՓՈՐՁԵԼ ԵՆ «ՀԱՐՅ ՊԱՐԶԵԼ», ԿԱ 1 ՄՊԱՆՎԱԾ

2024 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 23:18-ին, «Մասիս ԲԿ» ՓԲԸ-ից հաղորդում է ստացվել այն մասին, որ կտրած-ծակած վնասվածքով, ընկերների ուղեկցությամբ, իրենց մոտ բուժօգնության է դիմել է Նոր Խարբերդ բնակավայրի բնակիչ, 17-ամյա երիտասարդ, ով նույն օրը՝ ժամը 23:45-ին, մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության ընթացքում իրականացված քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, միջադեպին մասնակից անձանցից մի քանիսի, այդ թվում՝ տուժածին կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածք հասցրած անձի ինքնությունը, ովքեր նույն բնակավայրի բնակիչներ են:

Քննությամբ տվյալներ են ստացվել այն մասին, որ երիտասարդը կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներն ստացել է Նոր խարբերդ բնակավայրի գերեզմանատան հարեւանությամբ երկու խմբերի միջեւ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Ձեռնարկված քննչական եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Ս.Ս.-ն, անձնական հարցի վերաբերյալ համագյուղացու՝ Ս.Պ.-ի հետ պարզաբանումներ ստանալու եւ վրեժի շարժառիթով նրան պատժելու նպատակով, իր համախոհներին՝ նույն բնակավայրի վեց բնակիչներին եւ քննությամբ դեռեւս չպարզված անձանց հավաքել եւ տեղափոխել է Խարբերդ բնակավայրի գերեզմանատան հարակից տարածք, որտեղ, պայմանավորվածության համաձայն, ժամանել է նաեւ կոնֆլիկտի մյուս կողմը, այդ թվում նաեւ՝ տուժող Դ.Պ.-ն:

Ս.Ս.-ն, առանց պարզաբանում կատարելու, մի խումբ անձանց հետ խմբի կազմում սպանություն կատարելու դիտավորությամբ միավորելով իրենց ջանքերը, հարձակվել են Ս.Պ.-ի, Դ.Պ.-ի եւ վերջիններիս հետ նշված վայր ժամանած անձանց վրա, ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել վերջիններիս: Այդ ընթացքում Ա.Գ.-ն, դրսեւորելով առավել ակտիվ եւ ագրեսիվ վարքագիծ, իր մոտ պահվող դանակով հարվածներ է հասցնել գետնին ընկած Դ.Պ.-ի կենսական կարեւոր նշանակություն ունեցող օրգաններին, իսկ խմբի մյուս անդամները շարունակել են հարվածել Դ.Պ.-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ, այդ կերպ ապօրինաբար կյանքից զրկելով վերջինիս:

Նախաքննության ընթացքում կատարվել են մի շարք քննչական անհրաժեշտ գործողություններ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են արյան հետքեր, վերցվել են փորձանմուշներ, հարցաքննվել են դեպքին ականատես վկաներ:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, ինչպես նաեւ դատաբժշկական փորձաքննությունն եր:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ- հետախուզական եւ օպերատիվ-որոնողական միջոցառումների արդյունքում ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից մեկը՝ Գ.Յ.-ն, հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 8-րդ կետերով: Դատարանը բավարարել է վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու՝ քննիչի միջնորդությունը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ միջադեպին մասնակից բոլոր անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու, արարքներն անհատականացնելու, իրավական գնահատականի արժանացնելու ուղղությամբ:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 28 հազար 269 դեպք:



Կատարված հանցագործություններից 13 հազար 816 դեպքը գրանցվել է որպես ոչ մեծ ծանրության, իսկ 9 հազար 206 դեպքը՝ միջին ծանրության, 3 հազար 822 դեպքը՝ ծանր, իսկ 1 հազար 425 դեպքը՝ առանձնապես ծանր:

Հանցագործությունների ընդհանուր քանակից կատարվել է հրազենի, ռազմամթերքի գործադրմամբ 90 դեպք: Մարդու (անձի) դեմ ուղղված հանցագործությունները կազմել է 5 հազար 428 դեպք:

Գրանցված հանցագործությունների քանակը՝ ըստ ծանրության եւ ըստ ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի՝ 2024 թվականի հունվար-սեպտեմբերին ունեցել է հետեւյալ պատկերը

Երեւան՝ 12 319
Արագածոտն՝ 992
Արարատ՝ 1 974
Արմավիր՝ 2 439
Գեղարքունիք՝ 1 138
Լոռի՝ 2 038
Կոտայք՝ 2 456
Շիրակ՝ 2 096
Սյունիք՝ 1 267
Վայոց Ձոր՝ 4 27
Տավուշ՝ 1 123

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԹԱՐՄ ՄՈՐԹԱԾ ԱՐՋԵՐ ԵՆ ՎԱՃԱՌՎԵԼ

Երեւանում թարմ մորթած արջեր վաճառելու համար տղամարդ է ձերբակալվել: Տեղեկությունը հայտնում է ոստիկանության մամուլի ծառայությունը:

Նշվում է, որ ՆԳՆ է ահազանգել մի քաղաքացի. որսագողության դեպքը բացահայտելու համար ոստիկանության ծառայողները մեկնել են «Հրազդան» մարզադաշտի հարակից շուկա, որտեղ արջի 2 գլուխ են հայտնաբերել, որոնցից մեկը՝ ամբողջական մորթիով:

«Որսագողության կասկածանքով ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել վաճառողը՝ Չարենցավան քաղաքի բնակիչ 47-ամյա տղամարդը», - ասված է հաղորդագրությունում:

Նա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Մալաթիայի քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՑ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ

Երեւանի Կենտրոն վարչական շրջանում կատարված գործողությունների արդյունքում ձերբակալվել է 4 անձ, որից 3-ը պաշտոնատար անձինք են: Այս մասին հայտնել է հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի խոսնակ Մարինա Օհանջանյանը:

«Ձերբակալություններն իրականացվել են մեզ մոտ քննվող քրեական վարույթի շրջանակում: Ձերբակալվել է 4 անձ, որից 3-ը պաշտոնատար անձինք են», - նշեց Օհանջանյանը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ իրավապահները Կենտրոն թաղապետարանում գործողություններ են իրականացրել: Հիշեցնենք, որ գործողություններն իրականացվել են թաղապետարանի աշխատակազմի առեւտրի եւ սպասարկումների բաժնում:

ԿԱՇԱՌՔ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

Նոյեմբերի 8-ին՝ ժամը 17:10-ին, ՆԳՆ Երեւանի հաշվառման քննական բաժնից հաղորդում է ստացվել, որ Դավիթ Բեկի եւ Ժակ իվ Կուստոյի փողոցների խաչմերուկում 20-ամյա երիտասարդը, վարորդական իրավունքի վկայական ստանալու գործնական քննության ժամանակ դրական գնահատականի համար քննություն ընդունողին առաջարկել է 50 հազար դրամ կաշառք:

Երեւանի Ֆուչիկի փողոցի բնակիչ 20-ամյա երիտասարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել հակակոռուպցիոն կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 96 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳԱՅԼԵՐԸ ՇԱՏԱՑԵԼ ԵՆ ՈՒ ԱԳՐԵՍԻՎԱՑԵԼ

Տավուշի մարզի անտառներում գայլերը բազմացել, ագրեսիվացել են: Վերջին տարիներին որսորդները գայլեր չեն որսում: Գայլերի որս չի կատարվում, որովհետեւ գայլի միսն ուտելի չէ, որսորդներն էլ թանկ գնդակները խնայում են: Տավուշի անտառամերձ գյուղերի ծայրերին, հատկապես մութ ժամանակ գայլերը ոչնչացնում են առանց հսկողության մնացած ոչխարներ, խոզեր, ձիեր, ավանակներ: Գայլերը շատ խելացի, սրատես գիշատիչներ են: Նրանք ոհմակով հարձակվում են Տավուշի մարզի անտառներում, դրանց բացատներում տարվա բոլոր եղանակներին արածող ձիերի երամակների վրա: Այդ երամակները, սովորաբար, առանց ձիապանի են լինում, երամակը գայլերից պաշտպանում է երամակի արու ձին՝ հովատակը, որն աքացու ուժեղ հարվածներ է հասցնում գայլերին: Վերջերս սարում կովեր պահող մեկը տեսել է, թե ինչպես 12 գայլից բաղկացած ոհմակը շրջապատել ու քշում է երամակը, որպեսզի ձիերին գցի դարավանդից կամ իրենց համար հարմար տեղում ուրիշ կերպ շփոթեցնելով ձիերին՝ հարձակվի երամակի վրա: Որսորդական հրացանով զինված նախրաւանը կրակելով երամակը ազատել է գայլերի շրջապատումից:

ԿԻՐԱՆՑԻ ԴՊՐՈՑԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՉԴԱՐՁԱՎ

2022թ.-ից կառուցվում էր Կիրանցի դպրոցի նոր շենքը: Այն ժամանակ նախատեսվում, հայտարարվում էր, որ դպրոցի նոր շենքի գործարկումից հետո Կիրանցի հիմնական դպրոցը դառնալու է միջնակարգ, այլեւս Կիրանց գյուղի բարձր դասարանցիները ամեն օր Ներքին Ծաղկավան չեն գնա, որ տեղի միջնակարգ դպրոցում սովորեն: Ավելին՝ նախատեսվում էր, որ Կիրանցի նորակառույց, միջնակարգ դարձած դպրոցում կսովորեն նաեւ հարեւան Աճարկուտ գյուղի բարձր դասարանցիները, ովքեր Աճարկուտի հիմնական դպրոցն ավարտելուց հետո միջնակարգ կրթություն են ստանում Ներքին Ծաղկավանի եւ Սարիգյուղի դպրոցներում: Սահմանազատման անվան տակ Կիրանցի հողերը Ադրբեջանին հանձնելուց հետո Կիրանցի նորակառույց դպրոցը հայտնվեց նոր սահման հանդիսացող պատից մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա: 2024 թվականի սեպտեմբերի 1-ին Կիրանցի դպրոցի նոր շենքը գործարկվեց: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Կիրանցի հիմնական դպրոցը ե՞րբ է ստանալու միջնակարգի կարգավիճակ: Մարզպետարանից պատասխանել են. «Կիրանցի հիմնական դպրոցը միջնակարգ դպրոցի կարգավիճակ ստանալու հարցում հստակ ժամանակ չենք կարող նշել»:

Ոսկան Սարգսյան
Տավուշ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՎԵԼՎԱԾ՝ Superra

Գործարկվել է երկրորդային շուկայում արժեթղթերով գործարքների Superra հավելվածը: Այն մշակվել է «Ֆիդո Ինվեսթ» ներդրումային ընկերության կողմից՝ դեռեւս նախորդ տարի «Կոնվերս» բանկի հետ կնքված համաձայնագրի շրջանակում:



Սա «Կոնվերս» բանկի Bank as a Service քաղաքականության շրջանակում ֆինտեխ ընկերության հետ առաջին համագործակցությունն է: Շուտով Superra հավելվածը կինտեգրվի Converse Mobile-ին: Արդյունքում՝ «Կոնվերս» բանկի հաճախորդները հասանելիություն կստանան խնայողությունների կառավարման եւս մեկ գործիքի՝ բորսայում շրջանառվող պետական եւ հայկական ընկերությունների պարտատոմսերի:

«Ֆիդո Ինվեսթ» ներդրումային ընկերության տնօրեն Ահարոն Լեւոնյանի խոսքով, Superra հավելվածը ստեղծվել է որպես պարտատոմսերում խնայողությունների ներդրման պարզ, արագ, անվտանգ ու վստահելի հնարավորություն, որի միջոցով պարտատոմսերը, արժեթղթերն առցանց եղանակով հասանելի կդառնան սկզբնական շրջանում ռեզիդենտ, իսկ մոտ ապագայում՝ նաեւ ոչ ռեզիդենտ ներդրողներին:

Ահարոն Լեւոնյանն ասում է. «Superra հավելվածի անհրաժեշտությունն առաջին հերթին հասկացել ենք որպես մասնավոր ներդրող: Հասկացել ենք, որ գրեթե անհնար է առանց բանկ այցելելու թվային միջավայրում բացել բրոքերային եւ բանկային հաշիվներ եւ կատարել ներդրումներ հայկական արժեթղթերում...

Առաջիկայում հավելվածը հասանելի կդառնա Converse Mobile հավելվածում:

«Կոնվերս» բանկի հետ համագործակցությամբ գործընթացն ավտոմատացվել է. այլեւս կարիք չկա բանկ կամ ֆինանսական որեւէ այլ կառույց այցելել հաշիվներ բացելու, պայմանագրեր ստորագրելու, պարտատոմսեր գնելու կամ վաճառելու համար: Superra-ն, օգտագործելով բանկի ընդգրկուն գործիքակազմն ու ենթակառուցվածքը, իր թվային լուծումների եւ ճկունության շնորհիվ կապահովի հասանելիություն կապիտալի շուկաներին եւ կդառնա խնայողությունների նոր, այլընտրանքային գործիք»:

«Կոնվերս» բանկի ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Զաքարյանը հավելում է. «Սա կարեւորագույն քայլ է ՀՀ կապիտալի շուկայում ֆիզիկական անձանց ներգրավվածությունը բարձրացնելու տեսանկյունից, քանի որ այս համագործակցությամբ մենք փոքր ներդրողների համար հասանելիություն ենք ապահովում խնայողությունների կառավարման նոր հարթակին:

«Կոնվերս» բանկը որդեգրել է թվայնացման քաղաքականություն եւ հաճախորդի ցանկացած բանկային փորձառություն աստիճանաբար տեղափոխվում է թվային տիրույթ: Superra-ի նպատակն է թվային ուղիների միջոցով Հայաստանում կամ արտերկրում գտնվող փոքր ներդրողներին հնարավորություն տալ խնայողությունները տեղաբաշխել Հայաստանում այս պահին հասանելի պարտատոմսերում:

Ըստ որում, մենք ապահովել ենք իրացվելիության առավելագույն մակարդակ եւ բարձր եկամուտ ստանալու հնարավորություն. ներդրողները կարող են ցանկացած պահի իրացնել գործիքները՝ նույն հավելվածում վաճառելով պարտատոմսերը շուկայական գներով»:

Նշվել է նաեւ, որ Superra-ի հնարավորությունները կընդլայնվեն՝ ներառելով զարգացող երկրների արժեթղթեր:

Մանրամասների համար.

«Ֆիդո Ինվեսթ»՝041000880, 011800808, https://www.fidoinvest.am/am/pages/index/Superra/

«Կոնվերս» բանկ՝010 511 211

«Կոնվերս» բանկը եւ «Ֆիդո Ինվեսթ» ներդրումային ընկերությունը վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից:

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ԿՄԱՄՆԱԿՑԻ

Հայաստանի մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակման եւ երկրի ճանաչելիության բարձրացման նպատակով նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 23-ը Հայաստանն առանձին տաղավարով մասնակցելու է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում կայանալիք Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառին Ծրագիրն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ՝ «Մշակույթի զարգացման» հիմնադրամի եւ «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ:

Հայկական տաղավարում ցուցադրվելու են շուրջ 40 վարպետի ձեռագործ աշխատանքներ, այդ թվում՝ կարպետագործության, խեցեգործության, տիկնիկագործության տարբեր նմուշներ եւ հուշանվերներ:

Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառը կայուն ավանդույթ ունեցող միջոցառում է, որը, սկսած 1970-ական թվականներից, իրականացվում է Վիեննայի պատմական թաղամասերից մեկում:

Նշենք՝ 2023 թ. Հայաստանի առաջին մասնակցությունը Ստրասբուրգի Սուրբ Ծննդյան տոնավաճառին հաջողությամբ է ընթացել:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ArCa Pay ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ Converse Mobile–ՈՒՄ

ArCa Pay-ով փոխանցումներն արդեն հասանելի են «Կոնվերս» բանկի մոբայլ հավելվածում: Այսուհետ բանկի հաճախորդները կարող են Converse Mobile-ով վայրկյանների ընթացքում գումար փոխանցել համակարգին միացած այլ բանկերի հաճախորդներին՝ նշելով միայն ստացող կողմի հեռախոսահամարը:

Դրա համար բավարար է մուտք գործել հավելվածի «Փոխանցումներ հեռախոսահամարով» բաժին, նշել հեռախոսահամարը, ընտրել ArCa Pay համակարգին միացած բանկը, գրել գումարի չափը եւ փոխանցում կատարել: Գումարը ստացողի՝ ՀՀ դրամով ընթացիկ, քարտային կամ կուտակային (խնայողական) հաշվին հասանելի կդառնա վայրկյանների ընթացքում:

«Կոնվերս» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանն այս կապակցությամբ ասել է. «Բանկային ծառայությունների զարգացմանը զուգահեռ փոխվում են բանկերի հաճախորդների ֆինանսական կարիքներն ու ակնկալիքները. նրանք որոնում են լավագույն ֆինանսական փորձառություն, այդ թվում՝ պարզ, արագ ու անվտանգ փոխանցումների հնարավորություններ: Արդեն մի քանի տարի Converse Mobile հավելվածում հասանելի են «Կոնվերս» բանկի հաճախորդ հանդիսացող անձանց հեռախոսահամարով փոխանցումները: ArCa Pay գործիքի ներդրմամբ «Կոնվերս» բանկը ընդլայնում է գործիքակազմը՝ Converse Mobile օգտատերերին հնարավորություն ընձեռելով հեռախոսահամարով փոխանցումներ կատարել նաեւ համակարգին միացած այլ բանկերի հաճախորդներին»:

Մանրամասն՝ 010 511 211, converse-bank.am

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲԱՆԿԱՅԻՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»

Հայէկոնոմբանկի Visa Platinum/Metal, Visa Infinite/Metal քարտապանները այժմ կարող են օգտվել պրեմիում քարտերի նոր առավելություններից.

Ներդնել ավանդ ավելի բարձր տոկոսադրույքներով՝ ՀՀ դրամով՝ գործող տոկոսադրույք + 0.5%, ԱՄՆ դոլարով՝ + 0.2%

Անվճար վարձակալել անհատական պահատեղեր՝ քանակային առավելագույնը 3 անգամ եւ հանրագումարային առավելագույնը 3 ամիս ժամկետով՝ անկախ պահատեղերի չափերից (բացառությամբ Գլխամասային գրասենյակի պահատեղերի):

Visa պրեմիում քարտապաններն ունեն նաեւ բազում այլ արտոնություններ.

Մետաղական դիզայնի հնարավորություն

Անսահմանափակ անվճար մուտք օդանավակայանների բիզնես սրահներ, ինչպես նաեւ անվճար 1 հյուրի հնարավորություն՝ մետաղական քարտերի դեպքում

Fast Track ծառայության անվճար հնարավորություն

Concierge 24/7 աջակցություն

Միջազգային ճանապարհորդական ապահովագրություն

Մի շարք զեղչային առաջարկներ

Պրեմիում քարտապանները կարող են օգտվել այս եւ այլ բազում արտոնություններից՝ իրենց ֆինանսների կառավարումը դարձնելով առավել հարմար եւ շահավետ:

Առաջարկը գործում է մինչեւ 2025 թվականի հոկտեմբերի 1-ը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

«Ակբա» բանկը մեկնարկել է հրապարակային առաջարկով 5.000.000.000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի տեղաբաշխումը:

Բանկը տեղաբաշխելու է տարեկան 10.50% եկամտաբերությամբ 50.000 (հիսուն հազար) դրամային պարտատոմս:

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 60 ամիս է, տեղաբաշխումը մեկնարկելու է 2024 թվականի նայեմբերի 11-ին եւ տեւելու է մինչեւ դեկտեմբերի 2-ը ներառյալ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը պետք է լրացնի եւ Ակբա բանկ ներկայացնի պարտատոմսերի ձեռքբերման հայտ:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

- Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ իրավաբանական անձանց համար՝

- Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է Banking Forum 2024-ԻՆ

Երեւանում Հայաստանի բանկերի միության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Banking Forum 2024 առաջին միջազգային համաժողովը: Համաժողովը նպատակ ուներ միավորելու տարածաշրջանային եւ եվրոպական կառույցներին՝ քննարկելու ոլորտի առկա մարտահրավերները, կարծիքներ փոխանակելու եվրոպական ֆինանսական շուկաների հետ ինտեգրման հարցերի վերաբերյալ՝ հնարավորություն ընձեռելով հաստատելու փոխշահավետ գործընկերային հարաբերություններ: Միջոցառմանը մասնակցեցին առեւտրային բանկերի, ՀՀ կառավարության, Կենտրոնական բանկի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու Վրաստանի բանկային համակարգի ներկայացուցիչներ:

Արդշինբանկը մասնակցել է Banking Forum 2024-ին

Ֆորումի ընթացքում քննարկվեցին համապատասխանության ռիսկին, թղթակցային հաշիվներին եւ կապիտալի շուկաներին հասանելիությանը, ինչպես նաեւ ESG-ի՝ բնապահպանական, սոցիալական եւ կորպորատիվ կառավարման չափորոշիչների ներդրմանը վերաբերող հարցեր: «Արդշինբանկից» քննարկմանը մասնակցեց բանկի խորհրդի անդամ Ալեքսանդր ֆոն Գլայխը: Նա իր ելույթում ընդգծեց այդ սկզբունքները «Արդշինբանկի» մշակույթին ինտեգրելու ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունները:

«ESG ստանդարտները ներկայումս ավելի ու ավելի կարեւոր դեր են խաղում բանկերի կառավարման մեջ: Նախկինում դրանք «Արդշինբանկի» գործունեության կանոնակարգման ու համապատասխանության կարեւորագույն գործառույթների շարքում էին, իսկ այսօր արդեն բանկի բիզնես մոդելի մասն են կազմում՝ «կանաչ» վարկավորում, «կանաչ» պարտատոմսեր, էներգաարդյունավետություն, թափոնների կառավարում եւ այլն: Այս ոլորտում «Արդշինբանկը» հանդիսանում է հայաստանյան շուկայի առաջատարը: Ավելին՝ մենք առաջին բանկն ենք Հայաստանում, որը ներդրել է ECB-ի կողմից սերտիֆիկացված ծրագիր՝ Climcycle, որի միջոցով արդեն կարող ենք չափել ու կառավարել ESG-ի հիմնական ցուցանիշները, համապատասխանելով ավելի խիստ եվրոպական պահանջներին»,- նշել է Ալեքսանդր ֆոն Գլայխը:

Հիշեցնենք, որ «Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում:

«Արդշինբանկն» ունի ավելի քան 385 000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով:

«Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է: Բանկը նաեւ միակ ընկերությունն է Հայաստանում, որ թողարկել է եվրոպարտատոմսեր միջազգային կապիտալի շուկաներում:

«Արդշինբանկը» ներդրումներ է կատարում այլընտրանքային էներգետիկայի ոլորտում՝ մեծացնելով իր ներգրավվածությունը «կանաչ բանկինգում»: Բանկի գործունեությունը հիմնված է սոցիալական պատասխանատվության ու շրջակա միջավայրի պահպանության սկզբունքների վրա՝ ամուր կորպորատիվ կառավարման զուգորդմամբ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ Գ

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«Ֆասթ» բանկի հովանավորությամբ վերանորոգվել են Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի ենթակառուցվածքները: Բանկի կողմից արդիականացված սանհանգույցների դիզայնն ընտրվել է հատուկ երեխաների համար, վերանորոգման ընթացքում օգտագործվել են բացառապես բնական նյութեր: «Ֆասթ» բանկի ուշադրության կենտրոնում են եղել նաեւ թատրոն այցելող մանկահասակ երեխաների մայրերը՝ հատկացվել է առանձնացված սենյակ կերակրող մայրերին:

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի սանհանգույցները վերջին անգամ վերանորոգվել էին 2002 թվականին: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանի խոսքով՝ սանհանգույցները «թատրոնի ամաչելու վայրն էր», թեեւ 20 տարի առաջ վերանորոգվել էին, բայց շարունակվել էր պահպանվել խորհրդային տարիներից եկած ասիական ոճը, չկար տաք ջուր, սանիտարահիգիենիկ պայմաններ. «Թատրոնը մշտապես փոխում էր իր դեմքը, բերում էր նոր տեխնիկա, փոխվում էր դահլիճը, սրահը, ամեն ինչ դառնում էր ավելի ժամանակակից, բայց սանհանգույցները մնում էին նախորդ դարում: Համագործակցության, մեկենասության մասին խոսում եմ երեւի վերջին երեսուն տարին: Եվ լավագույն օրինակը հիմա ցուցաբերում է «Ֆասթ» բանկը: Երբ բիզնեսը եւ մշակույթը համագործակցում են եւ միասին են շարժվում, շահում են երկուստեք: Ես շատ ուրախ եմ, որ «Ֆասթ» բանկն այսքան մեծ ուշադրություն է դարձնում մշակույթի օջախներին: Սա խոսում է բանկի բարձր մակարդակի մասին, մտածողության մասին, որը չի սահմանափակվում զուտ բանկային գործունեությամբ, այլ հասկանում է, թե ինչքան կարեւոր է, որ մեր երկիրը լինի գրավիչ բոլոր ասպարեզներում», - ասել է նա:

«Ֆասթ» բանկը՝ որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, մշտապես դիտարկում եւ աջակցում է մշակութային վայրերի խնդիրները եւ շարունակելու է խոշորացույցի տակ պահել դրանք: «Ֆասթ» բանկի կողմից մշակութային նախագծերին աջակցությունը պարբերական բնույթ է կրում եւ Բադալյանների ընտանիքին պատկանող ընկերությունների խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵԹՍԲԻՆ

ԴԻԿԱՊՐԻՈՆ ԴԱՐՁԱՎ 50 ՏԱՐԵԿԱՆ

Ուոլսթրիթի «անզուգական գայլը» կամ ֆիլմարտադրության աշխարհի ամենագեղեցիկ տղամարդկանցից մեկը՝ Լեոնարդո ԴիԿապրիոն, նոյեմբերի 12-ին դարձավ 50 տարեկան: Մեր ժամանակների արտակերը մինչ օրս համարվում է Հոլիվուդի ամենատահանջված եւ ամենաբաս վարձատրվող դերասաններից մեկը, չնայած նրան, որ արդեն 50 տարեկան է:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դերասանի կյանքից հետաքրքիր դեպքեր:

Սկսենք ԴիԿապրիոյի անվանադրումից. ինչո՞ւ հենց Լեոնարդո:

Դերասանի անունը կապված է Վերածննդի մեծագույն նկարիչ Լեոնարդո Դա Վինչիի հետ: Հղության ընթացքում Լեոյի մայրը այցելում է թանգարան, որտեղ Դա Վինչիի նկարների առաջ նրա սիրտը սկսում է արագ բաբախել, իսկ ներսից փոքրիկը սկսում է շատ արագ հարվածել: Կինն այս դեպքից հետո հաստատուն որոշում է կայացնում՝ որդուն Լեոնարդո է անվանելու: Ի՞նչ իմանար ԴիԿապրիոյի մայրը, որ որդին հետագայում դառնալու է հայտնի դերասան ամբողջ աշխարհում:

ԴիԿապրիոն աչքի է ընկնում ոչ միայն իր համակրելի արտաքինով, այլեւ բնապահպանության եւ կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործում արված մեծ ներդրումներով: Այս ամենով հանդերձ՝ մամուլում հաճախ են քննարկվել նրա կյանքի որոշակի հակասական կողմերը նաեւ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է իր մասնակցությամբ շքեղ միջոցառումներին:

Մասնավորապես, մեծ աղմուկ բարձրացավ, երբ 2016 թվականին ԴիԿապրիոն մասնակցեց իր ընկերոջ՝ մալայզիացի ձեռնարկատեր Ջո Լոուի կազմակերպած շքեղ խնջույքներին: Ջո Լոուն հետագայում հայտնվեց կոռուպցիոն մի մեծ սկանդալի կենտրոնում. բացահայտվեց, որ նա ֆինանսական խարդախության միջոցով մեծ գումարներ է հափշտակել Մալայզիայի պետական ֆոնդից: Այդ միջոցներից որոշակի գումար, ենթադրաբար, ծախսվել էին այնպիսի շքեղ երեկույթների վրա, որոնց ներկա էին բազմաթիվ հայտնի դեմքեր, այդ թվում՝ ԴիԿապրիոն:

Այն ժամանակ մամուլը եւ հանրությունը քննադատեցին ԴիԿապրիոյին նման սկանդալային միջոցառումներին մասնակցելու համար: Հետագայում, երբ Ջո Լոուի կոռուպցիային վերաբերող գործերը բացահայտվեցին, ԴիԿապրիոն վերադարձրեց իր կողմից ստացած որոշ նվերներ, այդ թվում՝ Մարլոն Բրանդոյի օսկարը, որը Ջո Լոուն նրան էր նվիրել, ինչպես նաեւ մի քանի արժեքավոր արվեստի գործեր:

2019-ին Լեոն հարցազրույց տվեց «Մեր մոլորակը» (Our Planet) բնապահպանական վավերագրական նախագծի վերաբերյալ: Նա իր հարցազրույցներում անդրադարձավ կլիմայի փոփոխության մտահոգիչ վտանգներին՝ շեշտելով, որ մարդկությունը կանգնած է իր պատմության ամենավտանգավոր շրջադարձներից մեկի առջեւ:

ԴիԿապրիոն, միանալով բնապահպան ակտիվիստ Գրետա Թունբերգին, իր հայտարարություններով խստորեն քննադատեց համաշխարհային ղեկավարներին, որոնք, ըստ նրա, բավարար միջոցներ չեն ձեռնարկում կլիմայի փոփոխության դեմ: Նա ընդգծեց, որ ներկա սերունդը պետք է վճռական քայլեր ձեռնարկի, հակառակ դեպքում մարդկությունը մոլորակը կորցնելու իրական վտանգի առջեւ կկանգնի:

Այս հարցազրույցում ԴիԿապրիոն անկեղծորեն խոսեց իր վախերի մասին՝ ասելով, որ եթե առաջիկա տարիներին մարդկությունը չհասնի էական փոփոխությունների, շատ էկոհամակարգեր կկործանվեն, եւ մենք կկորցնենք բազմաթիվ կենդանական ու բուսական տեսակներ:

Հարցազրույցը սենսացիոն դարձավ նաեւ այն պատճառով, որ ԴիԿապրիոն ուղիղ կերպով խոսեց քաղաքականության եւ կորպորացիաների ագահության մասին, որոնք, ըստ նրա, խոչընդոտում են կլիմայական խնդիրների լուծմանը: Որոշ մարդիկ քննադատեցին Լեոնարդոյին՝ պնդելով, որ նա հայտնի դերասան է, շքեղ կյանք է վարում, ինչը նույնպես բացասական ազդեցություն է թողնում էկոլոգիայի վրա, սակայն շատերը գնահատեցին դերասանի անկեղծությունը եւ համարձակությունը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՆԱԶԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ԻՐ ՀԱՆԴԵՊ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դերասանուհի, հաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանն օրերս մասնակցել է հայտնի դիզայներ եւ ոճաբան Արամ Նիկոլյանի ցուցադրությանը, որից հետո կիսվել է իր տպավորություններով եւ պատմել կերպարի մասին:

Հարգելի՛ ընկերներ, ծանոթ ու անծանոթ հետեւորդներ: Նախ ՄԵԾԱՊԵՍ շնորհակալ եմ, իմ համեստ անձն այդքան կարեւորելու ու քննարկելու համար, @nikolyanofficial-ի ցուցադրությունից հետո, ում նպատակն էր ԿԱՆԱՆՑ միջոցով ներկայացնելու տասը կարեւոր հիմնասյուները, որոնց վրա պահվում է պետությունն ու Երկիրը, ու, որպեսզի թյուրըմբռնում չլինի, կարճ ներկայացնեմ իմ «կերպարը»:

Ինձ բաժին էր հասել ՀԱՎԱՏՔԸ, իմ սրտին ու էությանը ամենամոտ ու կարեւորագույնը:

Այսպիսով՝ իմ այս հագուստով «հավատք» կերպարը ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ Կերպարն է, եկեղեցին կնոջ կերպար է, եկեղեցու ավազանը համարվում է արգանդը, որտեղից ծնվում ենք որպես քրիստոնյա:

Եկեղեցին նաեւ ներկայանում է որպես Քրիստոսի հարսը, այդ պատճառով էին զգեստները սպիտակ՝ հարսանեկան:

Սողոմոնն իր երգ երգոցում հարս եկեղեցու ու որպես Փեսա՝ Քրիստոսի հարաբերությունները նկարագրում է շատ պատկերավոր:

Այսինքն՝ եկեղեցու կերպարը մինչեւ վերջ կանացի է, իսկ քողի վեղարանման ֆորմա՝ ձեւը, վերցված է ոչ թե հոգեւորականների վեղարից, այլ հակառակը՝ վեղարի ֆորման է վերցված մեր եկեղեցիների սրածայր գմբեթներից, որը խորհրդանշում է ուղիղ կապը Աստծո հետ:

Վստահ կարելի է ասել, որ Արամի մտածածը՝ մի կադրով տալ իր որոշած հիմնասյուների պատկերավոր մարմնավորումը՝ ստացվել է:

Ցավում եմ այն մաղձի, մտածված աղճատման ու հատուկ սեւացնելու պատրաստ որոշ «այրերի» պատրաստակամության համար, որոնք իրենց են միայն վնասում, ոչ ինձ, եւ ի վերջո, մի օր պետք է սովորենք ՏԱՐԲԵՐԱԿԵԼ դերասանին ու նրա ստեղծած որեւէ կերպար՝ իր անձից:

Ես խորապես հավատավոր մարդ եմ, իմ Տունն է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, իմ ամենաերջանիկ ու ցավոտ պահերի Ընկերն է ու ինձ համար իմ երկրում քիչ մնացած հենման կետերից, ու քավ լիցի, ես ԵՐԲԵՔ չեմ քննում որեւէ Պատարագիչ քահանայի կամ հոգեւորականի անձն ու մարդկային որակները, այլ խոնարհաբար ու երախտիքով լսում եմ Պատարագն ու մասնակիցը դառնում հաղորդության:

Երանի այս նույն ջանասիրությամբ ոմանք պաշտպանեին եկեղեցին իրական հարձակումների ժամանակ:

Այսքանը:

Եղիցի լույս

Հ.Գ. Արամ Նիկոլյանը բացառապես իր միջոցներով է արել այս հավաքածուն՝ նպատակ ունենալով ՀԱՍՑՆԵԼՈՒ ՄԻՏՔԸ, ես էլ առանց որեւէ շահի, ՄԻԱՅՆ իբրեւ ընկեր ու գաղափարակից՝ փորձել եմ օգտակար լինել... այ հիմա վերջ:

Լավ մնացեք:

Իր երկրում ամուր կանգնած՝ Նազենի»,- սոցցանցի իր էջում գրել է հաղորդավարուհին:

ՄԱՐԶԱԿԱՆ

6 ՄԵԴԱԼ՝ ՍԱՄԲՈՅԻՑ

Հայ սամբիստները 2 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ են նվաճել Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում անցկացված մեծահասակների աշխարհի առաջնությունում:

Հայաստանի հավաքականի կազմում աշխարհի առաջնության փոխչեմպիոնի կոչմանն արժանացել են 98 կգ քաշային Արսեն Խանջյանն ու մարտական սամբոյի 64 կգ քաշային Մայիս Ներսիսյանը՝ կանգնելով պատվո հարթակի երկրորդ աստիճանին:

Մարտական սամբոյի տղամարդկանց 58 կգ քաշային Համլետ Սուքիասյանը, 98 կգ քաշային Արման Ավանեսյանն ու մարզական սամբոյի կանանց +80 կգ քաշային Աննա Մկրտչյանը դարձել են աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիրներ: ԱԱ-ի բրոնզե մեդալին արժանացել է նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մարզիկ, 58 կգ քաշային Դավիթ Հովսեփյանը, որը հանդես է եկել Սամբոյի միջազգային ֆեդերացիայի դրոշի ներքո:

Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում ընդգրկված են եղել նաեւ Կարեն Սարգսյանը (58 կգ), Նարեկ Դալլաքյանը (64 կգ), Կառլեն Մահիկյանը (71 կգ), Բորիս Շատվերյանը (79 կգ), Վահագն Չալյանը (88 կգ): Տղամարդկանց մարտական սամբոյի թիմում հանդես են եկել նաեւ Համլետ Սուքիասյանը (58 կգ), Միեր Մերջանյանը (71 կգ), Սարգիս Վարդանյանը (79 կգ), Ավետիք Պողոսյանը (88 կգ), Արման Ավանեսյանը (98 կգ):

Կանանց թիմում ընդգրկված են եղել նաեւ Արփինե Ամիրյանը (50 կգ), Մելինե Մամիկոնյանը (54 կգ), Արփինե Մնացականյանը (50 կգ) եւ Սրբուհի Հովակիմյանը (54 կգ):

Փախստականների հավաքականի կազմում ՖԻԱՍ-ի դրոշի ներքո հանդես են եկել նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ Արսեն Կարապետյանը (79 կգ) եւ Դավիթ Գրիգորյանը (98 կգ):

Հայ սամբիստներն աշխարհի առաջնությանը մասնակցել են Վովիկ Խոջայանի գլխավորությամբ: Մրցավայր է մեկնել նաեւ Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ Միքայել Հայրապետյանը:

ՍԿՍՎԵԼ Է ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը սկսեց մարզական հավաքը ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայում:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Նոյեմբերի 11-ին ժամը 18:00-ին հավաքականը անցկացրել է առաջին մարզումը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հայաստանի ազգային հավաքական է հրավիրվել 26 ֆուտբոլիստ:

Սարգիս Ադամյանը եւս հրավիրվել էր հավաքական, սակայն չի միանա հավաքականին վնասվածքի պատճառով, իսկ Ստյոպա Մկրտչյանը նոր է ապաքինվել վնասվածքից եւ դեռեւս վերականգնման փուլում է:

Նոյեմբերի 14-ին՝ ժամը 21:00-ին, Հայաստանի ազգային հավաքականը կընդունի Ֆարերյան կղզիների հավաքականին, իսկ նոյեմբերի 17-ին արտագնա հանդիպում կանցկացնի Լատվիայի հավաքականի դեմ:

● *Նոյեմբերի 25-ին՝ ժամը 19:30-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

Ինչպե՞ս եւ ի՞նչ ընթացակարգով է իրականացվում դատապարտյալներին ներում շնորհելու գործընթացը:

Հակոբ Միքայելյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրության 135-րդ հոդվածով սահմանվում է, որ Հանրապետության նախագահը օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը: «Ներման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ Հանրապետության նախագահը սահմանադրորեն ամրագրված իր լիազորությունն իրականացնում է միայն ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին վարչապետի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա, որին կցվում է նաեւ ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը եւ Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում):

Ներման խնդրագիր ներակայացնելու իրավունք ունի հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձ՝ միայն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Ներման խնդրագիրը քննարկելու նպատակով՝ ՀՀ արդարադատության նախարարությունը ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ կազմում է անձնական գործ եւ ներկայացնում վարչապետին: Վարչապետը, դատապարտյալի վերաբերյալ ստացված անձնական գործն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

ՀՀ նախագահի աշխատակազմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո վարչապետը Հանրապետության նախագահին ներկայացնում է ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը եւ Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում): Վերոշարադրյալ առաջարկությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահն ստորագրում է ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը կամ իր առարկություններով այն վերադարձնում վարչապետին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Նիկողոսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանի առթիվ Հայաստանի նկարիչների միությունում բացվեց շանսոնյեին նվիրված La Boheme խորագրով ցուցահանդեսը:

Ցուցադրության մեջ տեղ են գտել հարյուր հայ նկարչի հարյուր ստեղծագործություններ՝ ոգեշնչված երգչի «Լա բոհեմ» ստեղծագործությունից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*